

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ՇՈՒԱՐՈՒՄ**

Աստուած իմ, եթէ կարելի չէր որ
 Ամէնքն ըլլային սափոր օրհնւած՝
 Լեցուն բարութեան գինիով հրգօր,
 Ընէի՛ր ամէնքն՝ իրարու դիմաց

Պողպատեայ վահան, եւ թոյլ չըտայի՛ր
 Որ տըկարը միշտ, ա՛ն ալ քու որդիդ,
 Իյնա՛յ եւ արեան իր քօղով կարմիր
 Ծածկէ՛ ամըչցող մարմինն իր վըտիտ....

Բայց չըրի՛ր այդպէս... Կ'ըլլան ոտնակոխ
 Ուժովէն՝ նըւազ ուժովներն ամէն
 Եւ կը զարնըի՛ եղբայրն եղբօրմէն....

Ի՛նչ խորհուրդ է այս, մարդ մարդու ոսոխ
 Եւ Դուն յաւիտեան տըկարին ընդդէմ...
 Աստուած իմ, ինչպէ՞ս ըզքեզ ըմբռնեմ....

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

1929